



Պատասխանատու  
Յովհաննէս Փիլիպեան

# ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՈՅ

Նամակըն ուղղելի են  
առ. Ղ. Գ. Պաղպաղարեան

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԻ ԵՐԿՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱՐԱՔ 2 ՅՈՒՆԻՈՒԱՐ 1882

ԹԻՒ 1187

### Ե. Զ. Դ.

Խմբագրութիւնս կը խնդրէ այն անձերէն որոնք տակաւին չեն վճարած մեր լրագրի բաժանորդագրին, բարեհաճին փութացնել զայն առ խմբագրութիւնս :

# 1882

Նոր տարւոյս սկիզբը Արարեալն Աշխարհն իր սրտագին բարեմակարդութիւններն առ համայն Ազգն, մասնաւորապէս և՛ իւր Յարգոյ բաժանորդաց մասնաւորապէս զկեն, կը փութայ ինչպէս օգտակար սովորոյթ է հետաքննել անարկ մի ձգել լրագրեալ տարւոյն շրջանին մէջ յուզուած ազգային մի քանի կարեւոր խնդիրներու վրայ, և Ազգին ուշադրութիւնն հրահրել այն անկողմ խնդիրներու բնութեան յարմար և կարելի դարձանք ինչ որ և աւելի ողջամիտ տեսութեամբ ստուգանքներու, որպէսզի գէթ Նոր տարւոյն շրջանին մէջ նոցա իրագործման ազգին կողմէ պէտք եղած գործունէութիւնն կատարուի :

Արդ՝ այսպիսի խնդրոց կարգին մէջ առաջին տեղն ունէր անշուշտ Հայկական կոչուած խնդիրն, զոր կ'Պաշտոյ ազգային լրագրութեանց ոմանք դժբաղդաբար այնպիսի մեկնաբանութեամբ զգեստաւորեցին, մինչդէռ բուն խնդիրն կարծես զգեստաւորեցին մտրտանալով ոչ միայն բաղձալեւալ բարիքն մինչ ցարդ չարգիւծաւորեցաւ, այլեւ բարոյապէս ի վնաս Ազգին յանդէպ :

Բանդի ինչ էր Հայկական կոչուած խնդիրն կամ 61րդ յօդուածն իւր բուն պարզութեամբ եթէ ոչ բազում տարիներէ ի վեր Ազգին բաղձալեւալ, և նախորդ Պատրիարքայ ինչպէս նաեւ ներկայ Ամենա. Ս. Պատրիարքին աղերսադին

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մեր նախորդ թերթին մէջ քաղաքիս Բոնայ Էփան կէտի զարկոյց եռամեայ երկնայոցն հրատարակած և մէն մի կէտերուն վրայ կարեւոր եղած խորհրդածութիւնն իսկ յայտնաւորեցին : Զիշեալ խորհրդածութիւնն մէջ հրաւեր կը կարգադրէր առ ի գլխի որ ուսումնարանայ և ուսուցչաց մասին հողածութիւնն ի գործ դրուի, պէտք եղած քաղաքի թիւնն մատուցանելով : Այս որչափ արդարացի էր, նոյնչափ արդար է նաև որ ուսուցիչք ևս իրենց կողմէ ժողովն լինին ազգային մանկուոյն կրթութեան մեծ խնդրոյն մէջ, և դաստիարակութեան քանի որ ինչպիսի ասանդութիւն, այնպէս որ ուսանողք ոչ թէ մի քանի բառեր թուականաբար խօսիլ ունին, այլ կարեւոր և ողջամիտ իմաստներով բռնեն, լուսաւորուին :

Այս տեսակետով երբ նկատուի թեան ասանդութիւնն յարմարանայ շատերուն մէջ տանողում Ազգային Պատմութեան դասերն, յոյժ հետի կը դառնանք զանոնք արդասաւոր մէթոսէ : Այստեղով ներկայ թերթովս Ազգային Պատմութեան ուսուցչաց ուշադրութիւնն կը հրահրուի որ ջանադիր գտնուին իրենց աւանդած դասերն, մասնաւորապէս և ազգային Պատմութիւնն ոչ թէ մեքենայորէն՝ այլ Եւրոպոյ մի քանի վարժարանաց մէջ ի գործ դրուած շահաւէտ եղանակաւ տանելն : Ինչպէս հետեւեալ կարեւոր և իմաստալից յօդուածին մէջ րայտարուած է. զոր Թիֆլիզի Միլիոն Հայաստանի Լրագրին տարւոյ 90 թիւէն կ'արտատպենք :

Այստեղովս մի կարեւոր դիտողութիւն, զի յօդուածի հայեցողութիւնն ոչ միայն մեր Ազգին՝ այլ ամեն ազգաց իրաքանչիւրի նկատմամբ մի ընդհ. տեսութիւն է :

Իմաստնաւ բարենորոգմունքն Հայաբնակ Դաւառաց համար, յորս նկատուի պատուոյ և բնից ապահովութիւնն, և ինչպէս յարմար անկիրթ ժողովրդոց, ամենին հակառակ բարեւեր կամաց Ոսմանեան օգոստափառ Սուլթաններու, որ բազմիցս կայսերական հրովարտանքներով յայտնած են իւրեանց բարձր հաճութիւնն բնդհանուր Պետութեան հպատակաց երջանկութե համար ամենայն անաշուտութեամբ և անխտրութեամբ աղչի և կրօնի :

Կըստստովանիմք որ այն բարենորոգմանց իրացուցման համար գործունէութիւնք և աշակցութիւնք պիտոյ էին : Բայց ընդ նմին հարկ է նաեւ խոտովանիլ որ կարևոր եղած գործունէութիւնք և աշակցութիւնք կային, և կան իսկ :

Վկայ են այսմ՝ կայսերական կառավարութե կողմէ ի գործ դրուած այնքան հողածութիւնք Հայաբնակ զաւառաց համար յատուկ բոմիսէր կարգելու, նոյնա վարչական ձևին նոր և յարմար ու ազգեցիկ կերպարան տալու, տեղական վեճերն ու հարստահարութեանց գէպքերն արդարութեամբ քննող ձեռնհաս ատեն մի հաստատուելու համար և այն և այն : Եւ այս ամենն ճիշդ այնպիսի միջոցի մէջ ուր Պետութեան երկտեսիս բաղձակերպ ծանր խնդիրներ իրենց ստուար քանակութեամբ և մեծ ստիպողականութեամբ կը ծանրանային և կառավարութեան համարն ուշադրութիւնը կը գրաւէին, որով բարենորոգմանց գործն կը յետաձգուէր, անվերջ մնալով յաշտութեան :

Վկայ են նաև Անգղիական դեսպան լորտ Տիւֆըրընի Օսմանեան մայրաքաղաքն յատուկ սոյն պաշտօնով դառլ, մինչև ցարդ նորա ներկայութիւնն, քանիցս կայսերական կառավարութեան գլխին, բարձրաստիճան նախարարաց հետ բանակցութիւնք և լանալան առիթներով խորհրդակցութիւնքն իւր պաշտօնն ի գլխի հանելու համար :

Վկայ են նաև Ամենա. Ս. Պատրիարք Զօր

կողմէ սոյն նպատակին համար ի գործ դրուած անձնուէր ճշունքն, պաշտօնական այցելութիւնքն, շերտագին թախանձութիւնն ուր ուրեք որ պարտ և պատշաճ էին :

Վկայ են այսմ անգղիական ընդհանուր հիւպատոսներու կողմէ կատարուած քննութեանց արձանագրին կողմ կապոյտ Տեսարաններն հանդերձ վիճակագրական տեղեկութեամբ և մարդահամարով :

Վկայ են նոյնպէս՝ Պատրիարքարանի կողմէ ի գործ դրուած աշխատութիւնքն և յօդուած վիճակագրական տեղեկութիւնքն և մարդահամարն : Երկու աղբիւրներէ յառաջ եկած այս օտար և ազգային մարդահամարներն, թէև բազում աշխատութեանց արդիւնք, բայց և այնպէս չեն անգործ ի թերութեանց, որոց յաղթել կ'երևի թէ չէր կարելի ի պատճառ տեղական, վարչական և այլ բազմաթիւ բնիկ անկանոնութեանց երկրին :

Այս ամենն կը հաստատեն թէ բաղձացուած բարենորոգմանց իրացուցման համար կարելի չանք և գործունէութիւնք չէին պակասած ձեռնհաս անձանց կողմէ : Խնդիրն ժամանակի խնդիր էր : Եւ պէտք էր քաջ խնդրուած լինել թէ՛ ժամանակին քայլերն իրենց բնական ծանրութիւնն և կշիռն ունին միշտ քաղաքականութեան վեճափառ ապարդիւն մէջ :

Սակայն ցաւալի է որ կ'Պաշտոյ ազգային լրագրութեանց ոմանք փոխանակ սոյնպէս չառնալով իրենց կէտերն ի կշիռ դնելու, փոխանակ լուրջ և հեռատես խորհրդով տրամաբանելու, աւելի իւրեանց յառաջդիմութեան երանդեան հետամուտ, կամ բանալեղծական բռնա աւելնալ զգաժուած այս ծանրակշիռ խնդիրն փոխանակ իւր պարզութեան և բնական հանգամանացն համեմատ ըմբռնելով հրատարակելու, որ մեծ օգուտ կրնար յառաջ բերել բազմազունեան, աւելորդ ձևերով նկարագրին ձևեր՝ որք թէ և մտերմական բանակցութեանց

րաքանչիւրը գոցանից թողնում է : Այս բոլորից յետոյ պատմութիւնը օրէնքներ է դուրս բերում, թէ ինչ պատճառներով և ինչ կերպով կաղձակեցանք են ազգային կեանքի այլ և այլ կողմերը և թէ գոքային կեանքի վրայ են ունեցել ազգութեան միւս կողմերի վրայ, և այդ կանոններն համաձայն ազգութիւնն էլ վարվում է ներկայումս :

Ուրեմն պատճառ, առիթ և կշիռ և հետևանք են այն դիտարկ պայմանները պատմական իրողութիւններ ուսումնասիրելիս, որոնց վան ցառութիւնը միանգամայն անկարելի է :

Ինչպէս որ կեանքի մէջ վերոյիշեալ պայմանները միմեանց հետ անբաժան պատմական կապով կապուած են, այնպէս և ուսուցիչները պատմութիւն աւանդելիս պէտք է նոյն ներքին պատճառական կապը բացատրեն և պարզաբանեն :

Եթէ վերոյիշեալ պատմութեան և ուսումնասիրելու պայմաններով մէկը պակաս է, ապա ուրեմն և ուսումնասիրութիւնը թերի և այդպիսին ոչ թէ պատմական իրողութիւն կարելի է անուանել այլ հէքեքի, առասպել :

Այսպիսի ներքին պատճառական մեկնութիւններով պատմութիւնը աւանդում են Ամերիկայում, Եւրոպայի շատ տեղերում և վերջին ժամանակները Ռուսաստանում, ոչ միայն միջնակարգ, այլ և տարրական ուսումնարաններում : Այս եղանակի օգուտը անսպասելի մեծ է նախ որ պատմական իրողութիւնը աշակերտները ըմբռնում են, ուրեմն և պատմութեան

### ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

#### ԵՒ

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազգային պատմութիւնը ինչպէս հայելու մէջ ցոյց է տալիս ազգի անցեալ կեանքը և անցեալի օրինակով ուսուցանում է թէ ինչպէս պէտք է ապրենք ապագայում : Ազգային կեանքը բաժանվում է երկու՝ հասարակական կեանք և քաղաքական կեանք : Հասարակական կեանքը կազմուած է ժողովրդի պորտապնունքը, բնական կեանքը, մտաւոր զարգացումը, սովորութիւնները, կրօնը, բնաւորութիւնը, քաղաքական կեանքը կազմում են՝ կառավարութեան եղանակը, վարչական օրէնքները, զանազան քաղաքական յարաբերութիւնները մեր ձակալ ազգերի հետ, ներքին և արտաքին պատերազմները և այլն : Սուք են մի որ և ինչ ազգութեան կեանքի, ուրեմն և պատմութեան գլխաւոր կէտերը, որոնց վրայ և դարձնում է ուշադրութիւնը : Բայց պատմութիւնը ինչպէս է վարվում կեանքի այդ գլխաւոր կէտերի հետ : Նա բացատրում է նախ պատճառը, որից առաջացել է և կախումն ունի ժողովրդական պարապմունքը, բնական կեանքը, մտաւոր զարգացումը, սովորութիւնները, կրօնը նոյնպէս և պատերազմները, քաղաքական օրենքները, կարգերը, վարչութեան եղանակը և այլն :

Պատճառը բացատրելուց յետոյ մեկնում է առիթը, որ նպատակ է վերոյիշեալների իրագործվելուն, ապա իրագործվելու կամ կատարվելու եղանակը, վերջապէս հետևանքը, որ իւ-

մէջ լայն քաղաքացիական սահմանի մէջ  
անսահման կը դառնային :

Պէտք է աստիճանաբար դուրսից հանել  
Բերական չէր, մի ուրիշ պարագայ ևս վրայ  
եկաւ, այն է՝ Սոսի կաթողիկոսական խնդիրն,  
որ թեև անհնարին չէր կեդրոնական վարչու-  
թեան շրջանակին մէջ իւր օրինաւոր լուծումն  
գտնել, սակայն այս մասին մէջ ևս փոխանակ  
խնդրոյն ոգւոյն համեմատ գիտակցաբար և  
ընթերցելով խորհելով, փոխանակ կիլիկիոյ պէս քն-  
դարձակ վիճակի մը վտանգալի կացութիւնն և  
կենսական օգուտներն ի կշիռ դնելով իրաց  
բարւոյ կարգադրութիւնն փութացնելու,  
գործոյն, սկիզբ տրուեցաւ պիտակութիւններ  
որոններով, միւսմ շարունակաբար ոչ միայն պատ-  
շաճաւոր չէր, այլև ձախող էր գործոյն բնու-  
թեան, իրաց վիճակն հրդեհի մը սկզբնաւոր-  
ութեան երևոյթն ունէր, որ վերահաս ջու-  
րերով գիւղին էր շիջուցանելու բայց ազգային  
լրագրութեանց ոմանք փոխանակ ջուր հասցը-  
նելու յանկարծ սկսան զայրաբան որոտող, և  
գոզցես բոցաւորիչ նաւթով և վազ արծարծել  
զայն և բորբոքել, մինչև այն կէտն ուր կրօնն  
իւր խաղաղասիրական նշանաբանով խնդրոյն  
մէջի իրեն պատկանեալ մասն սիրահամբոյր  
պատկեց յուրախութիւն ամենեցուն, մասնա-  
նիշ ցուցանելով և իւր դաս և ուսում աւան-  
դելով զի եթէ խնդրոյն քաղաքական մասն ևս  
միևնոյն խաղաղասիրական ոգւով նկատուէր և  
աշխատասիրուէր, տարակոյս չկայ որ այն ևս  
լաւագոյն կերպիւ կարգադրուած կըլինէր :

Այս, և այս տեսակ վերաբայ ընդունումներն  
և զան որ ազգային համեստ խնդիրներուն խը-  
րովատ կերպարան առին, և փոխանակ նիւթա-  
կան օգուտներու բարոյական փոփոխութիւնն  
Սակայն պէտք չէ կարծել թէ յիշատակուած  
ազգային խնդիրներն կ'Պոլսոյ մի քանի լրա-  
գրութեանց կողմէ ինչ կերպիւ որ ըմբռնուած  
էին՝ նոյն կերպիւ կ'ըմբռնուէին նաև համայն  
Ազգէն, կամ գէթ Ազգին մեծամասնութիւնն,  
ոչ բնաւ : Ազգն համալիր չէր, ահաւասիկ  
գաղութներու :

Նախ ազգային Պատրիարքարանն թէև ի  
սկզբն լուծութիւն կը յարգէր, ոսկայն ի վեր-  
ջոյն լուծութիւն հանդուրժել այդ լրագրութեանց  
բնած ընթացից դէմ վերջապէս ստիպուեցաւ  
իւր պաշտօնական յայտարարութեամբն (22  
դեկտ. 1881) ազգարարել թէ ազգային թեր-  
թերէն օմանց ընթացքն օրինաւոր չէ, և թէ  
Ազգային վարչութիւնն չկրնար թոյլ տալ որ ան-

նպատակին հասնուի են, երկրորդ այդ ձեռ ա-  
ւելի իրիծողական լինելով աշակերտները շատ  
աւելի զարգանում են և վերջապէս ինքեանք ա-  
շակերտները ոչ թէ չէղոք դեր են խաղում այլ  
գիտաւոր գործողն են դառնում :

Ազգային պատմութիւնը, որի մէջ կեանքի  
բոլոր կողմերը երևում են ինչպէս հայելու մէջ,  
իւրաքանչիւր ազգութեան համար ամեն բանից  
բարձր է, իսկ նորա վերջնական նպատակը ա-  
մեն բանից կարեւոր է ազնիւ :

Արդեօք ինչպէս են աւանդում ազգային պատ-  
մութիւնը ազգային ուսումնականներում : Յա-  
ւելով պէտք է խստորանշանակել, որ ամեն  
ուրեք նա աւանդվում է մեծ մասամբ մեղան-  
չելով պատմութեան դաստառութեան եղա-  
նակի դէմ, նորա դաստառութիւնը Հունի մեծ  
մասամբ նշանակութիւն տալոյն սրտի և մտքի  
վերաբերութեամբ : Ոչայլիս դաստառութիւն  
հնուանքը այն է լինում, որ աշակերտները  
երկար տարիներ առարկան ծածմեղուց յետոյ,  
գաղափար չեն դուրս բերում ազգային կեանքի  
վերաբերութեամբ, բայց մի կարգ կ'աւանդուի :

Ուրեմն ժամանակ է արդէն, որ մեր ազգա-  
յին պատմութեան ուսուցիչները որքան կարելի  
է թափ տան հնութեան փոշին և հետեւելով  
պատմութեան դաստառութեան իսկական ե-  
ղանակին՝ նոր լուսով լուսաւորեն ազգաւոր պատ-  
մութիւնը, և զարգացնեն մատաղ սերունդը  
ազգային կեանքով, ժամանակը այդ է պա-  
հանջում, ուրեմն պէտք է ժամանակի հետ ըն-  
թանալ դէպի առաջ որքան ոյժերը կը պատեն :

հիմն, և պարզ երկարութեան վրայ հիմնաւ  
լուրեր հրատարակեն, որ սակայ փաստաւոր հե-  
տեանքներ յառաջ կը բերեն : Ընթերցողը կը  
գտնեն սոյն պաշտօնական յայտարարութեան  
սլոգաններն ներկայ թերթիս Ազգային լուրերու  
մասին մէջ : Գոհ եմք յոյժ Ազգային Պատրիար-  
քարանի սոյն կարեւոր տնօրէնութենէ, որ իտե-  
լով միայն որ շատ ուշացաւ քանզի եթէ մեր  
առարկութեան նիւթ կողով խնդիրներու ծագ-  
ման ժամանակ այս օրինակ զգուշութեան մի-  
ջոցներ ի գործ դրուած լինէին, անտարակոյս  
մեծ օգուտ կըլինէր, և բազում փաստաւոր  
հետեանքներու առաջին կ'առնուէր : Ազգային  
չէնքերէ մի քանիսն այսօրեւ զինի ջրհանն հա-  
տու : Բնական զոյն, ազգային օրհուտէ :

Ուրեմն Ազգային Պատրիարքարանն ոչ միայն  
համալիր չէ՝ այլև բոլորքով այդ պիտի հրատա-  
րակութեանց դէմ :

Ազգային լրագրութեանց մի ուրիշ դասն ևս  
համալիր չէ այդ հրատարակութեանց : քանզի  
անոնցմէ ոմանք դէմ գրեցին, և ոմանք լու-  
ծեամբ իմացուցին թէ ոչ օրէն է և ոչ օգուտ  
կը բերէ ազգային փափուկ խնդիրներն այդ պի-  
տի ըմբռնումը մեկնել և հրատարակել, որով  
կրնան դայիակալիլ այլապէս տարբեր, որ ի  
փաստ ազգին կը յանգի :

Կ'Պոլսոյ մեր պատուարժան ազգային մէջ  
շատեր և յոյժ շատեր կան որք մինչև անգամ  
վիշտ և ստորմար յայտնած են այդ պիտի հրա-  
տարակութեանց դէմ : Եւ եթէ չպակեցին նոցա  
դրակին ասպարէզ ինչեւր միջոցներն, անտա-  
րակայն չլլալիս խորշին աւելի յառաջ երթալէ :  
Գաւառացւոյ և ոչ միայն գոհունակութիւն  
չեն պատճառած այդ պիտի հրատարակութիւնը  
բոլորում յայտնապէս տեսան որ բարի հետե-  
ութիւն չունեցան և չէին կրնար ունենալ :

Ռուսահայոցմէ անգամ կարեւոր և լուրջ դի-  
տողութիւններ ազգուեցան այս մասին, ինչպէս  
լրագրական էջերուն մէջ մերթ ընդ մերթ կը  
տեսնուէին :

Այս ամենն պայման կերպիւ ցոյց կուտան  
թէ համայն Ազգի համալիր չէր այդ տեսակ հը-  
րատարակութեան ասպին :

Իսկ մեր Զմիւռնիոյ լրագրութիւնը կարեւոր  
հրատարակութեամբ բուն ժամանակին քանիցս  
յայտնած են իրենց անհամաձայնութիւնն և տար-  
բեր կերպիւ ըմբռնումն : Ինչպէս որ Ա. Մա-  
մուլն քանիցս հզորապէս պարզած և լուսարա-  
նած է յիշատակեալ խնդիրներն, և համայն  
ընթերցողաց գոհունակութիւնն ստացած : Սա-

Ազգային պատմութեան թուրքութիւնը միայն  
դաստառութեան վատ եղանակից չէ, այլև նո-  
րա լուսաբանող և օժանդակ առարկայի՝ Հայ-  
աստանի աշխարհագրութեան բացակայութիւ-  
նից էլ է : Առանց կատարելապէս ուսումնասի-  
րելու Հայաստանը ազգային պատմութեան շատ  
և շատ կողմերը միանգամայն անհասկանալի կը-  
մնան : Հայաստանի աշխարհագրութիւնը շատ  
պատմական իրողութիւններ կարող է պարզել :  
Հայաստանի մակերևոյթի կազմութեամբ կարե-  
լի է բացատրել ժողովրդեան պարագմունքը,  
երկրի կազմութեամբ և կլիմայի ներդրութիւնը  
— բնաւորութիւնը, բնութեան կեանքը, կրօ-  
նը և այլն : Երկրի ընտանեւոր կարտուած լինե-  
լով— նախարարութեանց ծագումը : միայն  
տութեան թուրքութիւնը, ցեղերի, բարբառ-  
ները առաջնապէս կային : Նաեւ արական  
ուղղութեամբ— քաղաքական և առեւտրական  
յարաբերութեանց ծագումը, սահմանների  
դաշտային, ուրեմն անպարտաւոր լինելով—  
բղեղնութեանց և սահմանադիւր զօրքերի կար-  
գուիլը, բերդերի կառուցումը և այլն :

Հայաստանի աշխարհագրութիւնը բացի ազգ-  
պատմութիւնը լուսաբանելուց, իբրև ինքնու-  
րոյն առարկայ աւելի մեծ նշանակութիւն ունի  
Հայոց պատմութեան երևելի դիւցազունք իւր-  
եանց փառաւոր յաղթութիւններով գնացին,  
անյայտացան, թողնելով միայն մի ոգևորիչ զօ-  
րութիւն մեր երևակայութիւնը և սիրտը եր-  
բմնապէս ազգային սիրով վառելու համար :

կայն զարմանալի կէտ մի կայ, որ է՝ Կ'Պոլսոյ  
այդ թերթերէն մին վերջին անգամ կարծես  
յաւանդութիւն կ'այայտնէ ազգային խնդիրներու  
վրայ խորհելու և խօսելու արտօնութիւնն լոկ  
իրեն վերապահել, չնքնելով Զմիւռնացւոց այս  
մասին թերուդէմ կարծիք յայտնել, սպառնա-  
լով միանգամայն որ եթէ իւր հրատարակու-  
թեանց դէմ խօսին՝ անմիջապէս Զմիւռնի փա-  
ստաւոր պիտի կոչուին : Եւ որովհետեւ Զմիւռնիոյ  
լրագրութիւնը ժամանակին փութացած էին ի-  
րենց կարծիքն յայտնել, ահա այս անգամ  
խնդիրն իբրև լոկ իր սեպհականութիւնն նկա-  
տող չընեմք եղջերուաբաղայլ այժապաղ փա-  
տաբան մի զաննք իրեն զաւրակից կամ ոսոխ  
նկատելով հաճեցաւ Զմիւռնի փա-  
ստաւոր Զարակոյս չկայ որ փաստաբանութեան  
այդ կերտն ինչոյն ոչ վերաբերութիւն ունի  
և ոչ օգուտ կը բերէ, հետեւաբար անխորժի այ-  
ժապաղ փաստաբանութիւնն միայն կը յատկա-  
ցնէ :

Աւելի ցաւալիս այն է որ, այդ տեսակ փա-  
տաբանք հարկադրուած են այժմ ահամայ կա-  
մօք ընու իրենց էջերն այնպիսի տնտեսութեան  
ընթացք որք ասկէ յառաջ իրենց անփորձ և  
անհեռաւոր փաստաբանութիւններով նոյն է-  
ջերն լեցուցած հրատարակութեանց ձախող  
արդիւնքն են : Եւ այս տեսակետով նոյն իսկ  
այդ փաստաբանաց խնդներն համալիր չեն կը-  
րնար գտնուիլ իրենց նախկին ըմբռնումն : Թէև  
ամեն ճիշդ թափեւ հակառակը մեկնելու :

Ամփոփելով մեր խօսքն կը գտնեմք որ այդ-  
պիսի հրատարակութեանց հետ համալիր չեն  
ոչ Պատրիարքարանն, ոչ լրագրութիւնը, ոչ Կ'  
Պոլսոյ ազգայինը, ոչ գաւառացիք, ոչ Ռուսա-  
հայք, ոչ Զմիւռնացիք, և ոչ իսկ այդ հրատա-  
րակութեանց հեղինակաց խնդներն : Ուրեմն  
միահամուռ առմամբ համայն Ազգն դո՛ւ չէ  
կրցած լինել լրացեալ տարւոյ շրջանին մէջ ե-  
ղած անցեցն անցելու :

Երեւանի :

ԲԵՂԵԲԵՂՆԵ

Անդրիկ : Անդրիկ և Գաղղիոյ մէջ կը բու-  
նիք առեւտրական պայմանագրի մասին բանա-  
կցելու պաշտօնով Բարիք և իւր անդրիկայի պատ-  
ուիրակը բանակցութեան գլուխը խնդրոյն  
ինչ ինչ հանգամանաց մասին, զորս Գաղղիա  
առաջարկած է, իրենց կառավարութեան խոր-  
հուրդ հարցնելու համար Լոնտոն դարձան :

Իսկ բուն հայկական երկիրը իւր բազմադարեան  
հարստութիւններով, նորա վրայ բնակվող հայ  
ազգը իւր հարազատ սովորութիւններով, լեզ-  
ուով, կրօնով, որոնք ազգութեան գլխաւոր տա-  
րերն են, գոյութիւն ունին մինչև այժմ : Ներ-  
կայումս հայ ազգը առանձին քաղաքական  
կեանք չունի, բայց կայ նորա հոյակերտ և նո-  
րալ վրայ բնակվող ազգը, որոնք կազմում են  
գլխաւորապէս աշխարհագրութեան առարկա-  
ները :

Դրքս են ազգային առեւտրական հարստու-  
թիւնը, որով մենք զորս հազար տարի պարծե-  
նում ենք և ուր գտնուում է մեր ազգայն  
փրկութեան միակ յոյժ :

Թէ մինչև որ տնտեսական փոփոխու-  
թիւն համար կարեւոր է հանաչել և կատարելա-  
պէս ուսումնասիրել մեր հայրենիքը, ու երկր-  
է խօսք անգամ ասել : Առանց նորապէս ու-  
սումնասիրելու Հայաստան երկիրը իւր լաւ և  
վատ կողմերով, առանց ճանաչելու նորա վերայ  
բնակվող թէ հայ և թէ օտար ազգերը և այն  
բոլոր յաջող և անյաջող պայմանները, որ նոցա  
շրջապատում է, կարելի չէ նոցա ցաւերին  
դարմանել և վիճակը բարւոքել :

Ոչ երբէք : Ուրեմն Հայաստանը պէտք է  
ուսումնասիրենք երկու նպատակով— նախ-  
իրեն ազգային աւանդուկն սեպական հարս-  
տութիւնն ու երկրորդ՝ նորան օգնելու համար  
գիտակցաբար :

Ուրիշ է, Հայաստանի աշխարհագրութիւնը  
արդէն շատ ժամանակից մտած է հայոց ու-

Անգղիա հասած հետևեալ արկածին լուրն մեծ տխրութիւն պատճառեց հասարակութեան վրայ : Անգղիական Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ տեղի ունեցած համայնաւոր փութորին գրեթէ ամբողջ քաղաքը աւեր դարձուց : Բաղմաթիւ հաստակաւոյ շէնքեր , մինչև անգամ քաղաքին շրջապարիսպներն չկրցան դիմադրել փութորին բռնութեան , կործանեցան ահագին քանակով պատճառելով մարդոց և կենդանեաց և ընչից : Հաւահանգիստն ցանկուն անգղիական երկու պատերազմաւորներն Հոսպրէն և Սալիզալըրի ամբողջովին ընկղմեցան :

ՂԱՂՂԻԱ : Հանրապետութեան նախագահը նոր տարւոյ առթիւ դեսպաններու այցելութիւնքն ընդունած ատեն խնդրեց որ Գաղղիոյ բարեկամական հաւատքն նոքա հազարքն իրենց կառավարութեանց :

Պ. Կամպիլա երգուեալ գաղափարաց տուած վճիռն մի քանի օր իւր ստանձնութեան նիւթ ընելէ զինի որոշած է Պ. Բուսթամը ի թունուղ վերադարձնել :

Թունուղի Գաղաքէն գաղղիական զորացիներն մեկնելէն զինի , բնիկ արարներու մի քանի պարագլուխք իրենց խոստացած հնազանդութեան հակառակ նորանոր ընդդիմութեան ցոյցեր քրքր և իրենց վրայ դրուած պատերազմական տուգանքն չեն կամեցած վճարել : Այս լուրին վրայ Հոփըրո զօրավարն վերստին արշաւել սկսեց և յիշեալ ապստամբաց վրայ :

Թունուղի հարաւային կողման ապստամբութիւնն զրեթէ իսպառ նուաճուած է : Միայն 2300 վրաններէ բաղկացեալ Համամաթ ցեղն մնացած է , և սակայն ընդ հուպայն ևս ի հնազանդութիւն գալու հակամեծ է :

Տըլուք զօրավարի զօրադուռն ևս ճէլայի ի ապստամբաց վրայ արշաւելով մինչև Մարոքի երկիրը հաղթական ըրաւ զանոնք :

Պետական խորհրդոյ անդամ Պ. Ժ. Վէյո արտաքին գործոց նախարարութեան քաղաքագիտական մասին տնօրէն անուանեցաւ փոխանակ Պ. Բուսթամը :

Կը հաստատեն թէ Պ. Բուսթամը ի Պէրլին , և կոմ Դոտորաի ի Բէրլինի գաղղիական դեսպան անուանեցան : Պ. Բուսթամը ի Բէրլինի քաղաքէն ընդ հանուր հիւպատոսն Պուքրէշի գետայն անուանեցաւ փոխանակ Պ. Տիւրքո : Օպէրի :

Գաղղիական միայն ուղադրեցաւ Պ. Բուսթամը Թունուղ ժամանելով համակրապէս ընդ ունեցաւ :

սուլթանները , բայց ամենուրեք սկսած ծխած կանիք մինչև ամենաբարձր հայ ուսումնարաններու մասերի վաղ բաղդի և ենթարկուած քան հայոց պատմութիւնը , նա մանաւանդ որ սորա համար բնաւ դասադիրք էլ չկայ և ոչ էլ իբրեւ աւանդին առարկայ առանձին գտնելու հոյուսումնարաններու : Մէկ տեղ ընդ հանուր աշխարհագրութեան ուսուցիչը մի քանի տեղեկութիւններ տալով է անցնում , միւստեղ աղջկային պատմութեան ուսուցիչն է դասադիրքի սկզբում ցեղեղանաւ անունները սերտել տալիս այդ տեղերէ (այն ևս բարեկարգ համարուած ուսումնարանում) աղջկային պատմութիւն անցնում ևս անց հայաստանի աշխարհագրութեան , կարծես թէ բոլոր պատերազմները , մարդիկ , քաղաքներ , զինուոր օդի մէջ լինին եղած և ոչ երկրի վերայ :

Զգում են արդեօք մեր գաղղիների վառչութիւններից չտուրը , որ իրանց յանձնուած ուսումնարանները միայն անունով են աղջկային , իսկ զուտ աղջկային հոգի մնուցանող այդ երկու առարկաները սղորմելի վիճակի մէջ են , ևս է ուշ քան երբէք :

Խոկապէս Հայաստանի աշխարհագրութիւնը հայոց ուսումնարաններում առանցիկաբար տեղ պէտք է բռնի և ուսումնասիրութի կանոնադրապէս : օրինակ երկրի մակերևոյթի կողմութիւնը անցնելիս պէտք է ցոյց տալ , թէ որտեղի հող աւելի արդիւնաւոր է երկրագործութեան , որ տեղին անասնաբուծութեան համար և այլն , նոյնպէս պէտք է ցոյց տալ , երկրի ներքին բաղ-

հասարակութեան :

Հանրաժանութի հայագէտ և հայասէր Պ. Էտուար Տիւրքի վախճանեցաւ : Հանգուցեալ Գաղղիոյ Արևելեան կենդանի ընդուայ աղջկային մեծ վարժարանին մէջ հայերէն լեզուն կը դասաւորուէր : Ընտիր երկեր ունի մեր աղջկային կրօնի գրականութեան և պատմութեան վրայ :

ԹՈՒՍԻԱ : Գրոնչատ քաղաքին մէջ , որ Թուրքիոյ պետութեան նաւարանն է Պալթիկի ծովախորշի մէջ վրայ , ստակայի հրդէհ մի ծագելով քաղաքին մէջ չորրորդ մասն մոխիր դարձուց : Այս մասին կասկածներ կան թէ ուրացականաց մարդ կա՞ գործին ներքեւ :

Բէրլինի արքունիքի կառքերու թանգարանը գող մտնելով հանդիսական պարագայներու համար գործածուած կառքերու թանկազին դարդերն կորսուեց . և ձեռք չանցաւ թէ և ստակականութիւնն հետամուտ է զբաղեցնելու :

Վարչաւի քաղաքի եկեղեցւոյ մի մէջ Սուրբ Դիմիտրի անունի օրը Հրէայ մի գողութիւն ընդունաւ փորձած միջոցին՝ ոճրագործութիւնն տեսնուելու վտանգէն խուսելու համար յանկարծ կրակ կոյ գողութեան ժողովրդեան խուռն բաղմութեան մէջ ծոցկայի չիփով թիւն ծագելով իրար անցեր են և փախչելու տաղանդին մէջ 30 անձնք մեռեր և բաղմաթիւ անձնք վերաւորուեր են : Այս վերաբերեց 23րդ քրիստոնէայ և 22րդ հրէայ են : Այս արկածին վրայ ժողովուրդն գրգռուելով հետեւեալ օրը քաղաքին մէջ ընդհանուր խռովութիւն ծագեց և , և հրէից խանութներու ապստամբներն աւառութեան մատնուեր են : Այս առթիւ 2030 շափ անձնք ձեռնադրուած են :

Թայլան քաղաքի մագառան մէջ մեծագու- մար դրամի գողութիւն պատահելով բոլոր մաքսային պաշտօնատարք բանտարկեցան :

Բէրլինի Բոնիֆատի կոյուղի փողոցին մէջ ներքին գործոց պաշտօնատար պարսպի յետակողմը մի քանի անձնք , նարինջներու մէջ ամփոփուած տնտեսութի կողմեր փոխադրուելով միջոցին ոստիկանութիւնն վրայ հասնելով ձեռնադրուեց զանոնք :

ՊԵՐՍԻԱ : Վիլհելմ կայսրն Նոյ տարւոյ առթիւ բարձրաստիճան պաշտօնատարաց այցելութիւնքն ընդունած միջոցին յայտարարած է թէ եւրոպական խաղաղութիւնն անվտար պիտի պահպանուի :

մատնակ անսպառելի հանքային հարստութիւնները և այն թէ՛ մինչև որ աստիճան մակերևոյթ կազմող լեռները պաշտպանուած են Հայաստանի սահմանները (պատմական) կամ արդեօք նոքա կորսելով երկիրը չեն գաղափարեցնում ներքին հանդուակցութիւնը , չեն նպաստում աւանդին իշխանութեանց կազմուելուն և միապետութեան թուլանալուն , այդ լեռների կիրճերը կամ բարձրութիւնները ինչ ամուր պատերազմական տեղեր ունին , ինչ ազգայն իտական նշանակութիւն ունեն , երկրի բաժանուած և յատկութիւններով միանգամայն առարկա մասերը որքան նպաստում են ցեղերի առաջնաւուն բարբառների , սովորութիւնների , բնաւորութեան , կենքի եղանակի բաղմադրութեան , աղբի միութեան , թուրութեան , երկրի բաժանականութիւնը որքան քննադատ է ժողովրդեան յաւաքութեան , իսկ բաղմառականութիւնը օգնում ժողովրդեան բաղմադրմանութեան , վերջապէս սահմանների կազմութիւնը աւելի որ տեղութեանց հետ է նպաստում առևտրական և քաղաքական յարաբերութեանց մէջ մանկել , ուրեմն և ո՞րի աղբեցութեան աւելի ենթարկուել կարող են երկիրը : Նոյն կերպով պէտք է ուսումնասիրել գետերը , լճերը , օդը և այլն : միայն յարմար եմ համարում ասել , որ նախ պէտք է փնդեական , ապա հասարակական և վերջապէս քաղաքական մասը անցնել , որովհետև իւրաքանչիւր հետեւեալ միայն նախորդով կարելի է լուսարանել : (Մագնորդը լազոյլ բռնով) :

Գերմանիոյ և Գաղղիոյ բարեկամական յարաբերութեան պահպանութեան մասին լուսապէս հսկող Պէրլինի գաղղիական հրաժարեալ դեսպան Սէն Վալիէ կոմսն տրժանացաւ Նուէր ընդունել կայսեր մարմարեայ կիտարձանն :

Ալի Նիզամի բուշան Պէրլինէն մեկնելու առթիւ իւր հրաժեշտն մատուցանելու համար կայսեր ներկայացած է յոյժ հանդիսաւոր կերպիւ Սոյն ներկայացման կառավարողէր արքունեաց Արարաբապետն : Վիլհելմ կայսրն ի վերջոյ մատնաւոր տեսակցութեամբ պատուեց զՍիւշերն :

ԱՄՍՏՐԻԱ : Ալի Նիզամի բաշա և Բէշիտ-Պէյ Պէրլինէն քննելով ժամանեցին ի վիեննա , ուր և հանդիսաւոր կերպիւ ներկայացան կայսեր , և յոյժ սիրալի ընդունելութիւն գտան : Սոյն վերապետական ունեղութեան զինվորական գեսպանութիւնն տեսակցութիւն ունեցաւ Արտաքին նախարար Գրիֆի կոմսին հետ , որ Աւստրո-Հունգարական պետութեան Թուրքիոյ վրայ ունեցած համարումն յայտնելով հետեցուց թէ Թուրքիա իւր ամեն խաղաղասիրական ձեռնարկութեանց մէջ կարող է վստահել Աւստրիոյ բարեկամութեան վրայ :

Դանուբի նաւարկութեան մասին Աւստրիո և Ռուսիոյ մէջ ծագած միջադէպն , որո մասին ծանուցուած էր նախորդ թերթում , այս անգամ վերջնապէս լուծուած կրնայ համարուիլ : Փանդի Ռուսիոյ կառավարութեան Արտաքին գործոց նախարարի կողմէ՝ Աւստրիոյ կառավարութեան ուղղեալ հեռագիրն պէտք եղած բաւարար գոհացումը տուած է : Որով և այս երկու կառավարութեանց մէջ յարաբերութիւնք այժմ առաւել քան զառաջինն մեղմեցան եղանակն :

ԵԳԻՊՏՈՍ : Կառավարական գծաւորութիւն լուծուելու վրայ են : հաստատապէս յոյս կայ որ խաղաղութիւնն ընդ հուպ կը վերահաստատուի , և անգործութիւնը ընդ հանուր կերպիւ կըտիրէ : Աղջկային կուսակցութիւն կոչուած Միւսթեան երեք գլուխներէն մին Արապի Պէյ յայտադրով մի բացատրութիւն կուտայ Միւսթե պահանջմանց ինչ լինելուն վրայ : նախ Բ. Դրան և Եգիպտական կառավարութեան մէջ տիրող արդի յարաբերութիւնքն իբրեւ հիմ կը մտնէ աղջկային այս շարժման : Սուլթանին գերիշխանութիւնն և խաղիֆայութիւնն կը խոստովանին : և ինքզինքն հաւատարիմ առ Խըտիֆը Արապի պէյ կը պահանջէ որ Խըտիֆն բարեհաճի կատարել իւր այն խոստումը զոր տուած է կառավարութեան գործերը պատուիրակաց ժողովին համաձայնութեամբ անօրինելու :

Անգղիոյ և Գաղղիոյ եգիպտական երևմտից վրայ հսկողութիւնն կարեւոր կը գտնէ բայց առ ժամանակեայ : Լոկ եգիպտացի զօրաց միջոցաւ եգիպտոսը կառավարեն բնական և կարելի համարելով հանդերձ կ'առաջարկէ որ զօրաց թիւը , որ այժմ 12,000 է բաղկանայ , 18,000 յանգի :

Սոյն յայտարարութեանց վրայ շատ չանցած Արապի պէյ պատերազմական գործոց խորհրդական անուանեցաւ Դէրիֆ բաշայի հաստատութեամբ : որով յայտնուած է թէ կատարեալ համաձայնութիւն գոյացած է ընդ մէջ բարձր Խըտիֆին Պատուիրակաց խորհրդոյն և նախարարութեանց :

ՅՈՒՆԱՍՏԱՆ : Ընտրական գործողութիւնք կանոնաւորապէս կը շարունակուին : Հասարակաց համակրութիւնն կերելի թէ Պ. Բուսթամը իւր կողմը պիտի բարձրացնէ , որոյ նախարարութիւնն արդէն մեծամասնութիւն ստացած է : Նոյնպէս երեսփոխան բնաւորած են Պ. Ա. Զիլմանօրուլ և նորա եղբայրն Պ. Սոկրատ որ Աթանա Հալաֆ տեսուչն է :

ԿՈՄԱՏԱՆԻ ԿՈՄԻՏԵ

Կոյսերական նոր հրամանալիւր մի Բ. Դրան միջոցաւ հրատարակուելով 8 յոգ ուսմանքն բաղկացեալ կանոնադրութիւն մի կը հաստատե մայրաքաղաքին մէջ տեղի ունեցած ամուսնու-

թեանց, ծննդոց և վախճանմանց, բարեկարգ-  
արձանագրութեան համար:

Սոյն հրամանագիրն չկըտրուի մինչև ինչ-  
քաղաքին թաղապետական շրջանակաց մէջ ի-  
րեք յատուկ տուններէ մասնակցող ուր պէտք  
է արձանագրութիւն ամուսնութիւնք, ծնունդ և  
վախճանմունք:

Իսլամաց ամուսնութիւնքն չիւն կրնար կատա-  
րուիլ մինչև որ թաղային խմբակներու իշխու-  
թեամբ Շէրիի գաւառականներէն տրուած հրա-  
մանագիրն իրաւունք տալով արձանագրութեան իշխա-  
նութեան կողմէ չվաւերացուի:

Նոյնպէս էլ քրիստոնեայ ազգաց և հրէից ա-  
մուսնութեանց համար: Պատրիարքարանաց և  
խալիվայի կողմէն տրուած չհրամանագրի-  
րերն պէտք են վաւերացուիլ իրաւաբանիւր տ-  
մուսնութեան պատկանեալ թաղին քաղաքա-  
պետական իշխանութեանէ:

Սոյն վաւերացմանց և արձանագրութեանց  
սակագիրն որոշուած է 5 զրուշ, որոյ երեքն իս-  
լամաց համար խմբակներուն, քրիստոնեայից և հրէից  
համար նոցա կրօնական իշխանութեանց պար-  
տականութեան պիտի տրուի: Մնացեալ 2 զրուշ  
թաղապետութեան պիտի մնայ ի ծախս ար-  
ձանագրութեանց: Թաղերէն ծննդոց և վախ-  
ճանմանց համար աւարտութիւնային Տեսչութեան  
իրմոխսագիրը զրկելու սովորութիւնը պահելով,  
թաղապետական իշխանութեան ալ իրմոխսա-  
պէր պիտի զրկուի իրաւունքէն նոցա տուններէ-  
րուն մէջ ևս ծնունդք և վախճանմունք արձա-  
նագրութիւն:

Սոյն նոր կանոնաց հակառակ վարուող խմբակ-  
քահանայք և խախտած պատժական օրինաց 234  
յոգեւածին համաձայն որոշուած ատուականքն  
վճարելու պիտի դատաւարուին:

## ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազգային թերթերէն ոմանք սովորութիւն են  
ըրած ինչ որ կը լինէ առանց ստուգելու հրա-  
տարակել:

Ազգային վարչութիւնը բարեկամ տարաբա-  
կան տղապետութեան չըրտելի երեք իւր տարբ-  
րեւուն քննադատութիւնը տեսնելէ պարե-  
սական թերթերու մէջ սակայն չկրնար թոյլ  
տալոր անհիմն կամ պարզ ենթադրութեանց  
վրայ հիմնալ լուրեր հասարակութեան մէջ  
տարածելով անոր վիճաբանութեանց տեղի  
տան, որ ստեղծասակար հետեանքներ յառաջ  
կրնան:

Երբ տեսակ լուրերու կարգէն է կիլիկիոյ Ս.  
Կարողիկոսին կողմէն մայրաքաղաքիս մէջ  
մասնաւոր գործակալութիւն մը հաստատուե-  
լուն և Մաքսուտեան Վսեմ. Սիմոն պէյի նոյն  
պաշտօնն ստանձնած ըլլալուն լուրն, որ հրա-  
տարակուած է քանի մը թերթերու մէջ:

Ուստի Ազգային վարչութիւնն ներկայ պաշ-  
տօնական յայտարարութեամբ կը հրաւիրէ բո-  
լոր ազգային լրագրագետներն որ բարեհաճին  
յետ այսորիկ ազգային վարչական գործոց նը-  
կատմամբ իրենց առած տեղեկութիւններն առ-  
անց Պատրիարքարանի Դիւանատունէն ստու-  
գելու չհրատարակել:

Կ. Պոլիս, 22 Դեկտ. 1881

Ի Պատրիարքարանի Հայոց

Ինչպէս անցեալ 1880—1881 տարւոյ շրջանին  
մէջ քաղաքիս հայ ժողովրդեան ծննդոց, պա-  
կեղոց և նշնեցեղոց ցուցակն անցեալ տարւոյն  
վերջը հրատարակած էինք մեր 1161 թուով,  
այս տարի ևս կը վերջանայ հրատարակել վեր-  
ջացեալ 1881 տարւոյն ընթացքին մէջ պատա-  
հած ծննդոց պատկերաց և նշնեցեղոց ցուցակն  
քաղաքիս Արժ. քահանայից տուններէն քաղ-  
ուած աշխատասիրութեամբ Արժ. տէր Աւե-  
ուան քահանայի Սարգսեան, Յենթաց վերջաց-  
եալ տարւոյ 108 ծնունդ եղած է, 644 արու,  
444 էգ: Նշնեցեալ եղած է 170, որոց 97 ար-  
ու և 73 էգ: Պսակ եղած է 36:

Սոյն համաւճռութիւնէն յայտնի կը տեսնուի

որ ծննդոց 108 թիւը նշնեցեղոց 170 թուոյ հետ  
համեմատելով այս տարւան չընկնի մէջ իշխ-  
րի Հայ ժողովրդեան թիւէն 62 հոգի պակաս  
է: Երկուքեւ նախորդ տարւան շրջանին մէջ  
11 Հայ միայն պակասած էր: Տասն տարիներէ ի  
վերջ և ոչ մի տարի տեսնուած է որ աւելնայ:

Ամուսնութեանց թիւը անցեալ տարի 33 այս  
տարի 36 եղած է:

Ծննդոց թիւը անցեալ տարի 117 այս տարի  
108 եղած է:

Նշնեցեղոց թիւը անցեալ տարի 128 այս տա-  
րի 170 եղած է:

Բնականապէս Զմիւռնիոյ Հայ ժողովուրդն  
տարուէ տարի և օրէ օր արագապէս կը բնակուի  
Այսօր 300է աւելի չափահաս երիտասարդներ  
ունինք, ոչ ամուսնացեալ: ասոնցմէ եթէ 200  
իրենց ազգային վիճակն նկատողութեան կառ-  
նուն, մնացեալ 100 բարեհոխ երիտասարդաց  
անխուսելի և սուրբ պարտաւորութիւնն է ա-  
մուսնանալ և իւր զաւակ պատրաստել, ապա  
թէ ոչ իրենց անտարբերութեամբ և իւր օրէ  
օր կը բնակուի և օր մի և այն ոչ յոյժ անպան-  
Ամսվէրտամի և Մէլէսի գծաւոր դակատա-  
գիրն կ'ստանայ Զմիւռնիոյ:

Եւ միթէ ազգասիրութիւնն է այս:

Ասկէ աւելի կենսական և մեծ խնդիր չկրնար  
ըլլալ մեր Ազգին համար, վասնորոյ չըմագինս  
կը հրաւիրեմք ամեն ձեռնհաս անձերու ուշադ-  
րութիւնն որ ոչ մի առիթ վանց չընեն այս մա-  
սին քարոզելով և խօսելով:



ՄԱՆԱԳԻՐ

Տիկին Սուլթան Ս. Աւետիքեան, զինի երկա-  
մանայ հիւանդութեան սոյն կէս զիշերն յանա-  
կնկար առ լատուած փոխեցաւ ի հասակի չորջ  
47 ամաց, ի խորին աւագ թողով իւր գորովա-  
գութի մայրն իւր սիրելի ամուսինն և որդին և  
եղբարն, և համայն բարեկամքն:

Հանգուցեալն գեղանի և լի շնորհք, իւր  
աղիւ բարութ և վեհանձն ու առաքինապէս  
բնութիւնով համար յոյժ համալիրելի եղած էր ա-  
մենուն: Կը թողու միակ որդի Մեծա. Աւետի  
Ս. Աւետիքեան, որ Զմիւռնիոյ Հայ երիտասար-  
դութեան պատիւ կը բերէ գերմանական կրթու-  
թեամբ, ընտիր ընդունադիտութեամբ և վաճա-  
ռական տաղանդով, միակ միջիմարութիւն իւր  
սիրելի Հօր և հանրոյն:

Երկնային միջիմարութիւն կը մարդկեմբ նոցա,  
մանաւանդ հանգուցեղոյն հեղաբաց Մեծա. Մար-  
գար և կարապետ աղայից և վաւերապէս թագ-  
աւոր բաշայի Յակոբեան:

Ուրախութեամբ կը հրատարակեմք հետեւեալ  
նամակն, քաջալերելով Պատուարժան Մանա-  
հիւրի ազգասէր առաքիններն որ առգէն նպա-  
տակ դրած են անձնուէր աշխատիլ ի նպատ  
Ազգային կրթութեան տարածման ի Հայարնակ  
գաւառս, հրաւիրելով միանգամայն Զմիւռնիոյ  
Արդոյ հասարակութիւնն օժանդակել նոցա ի-  
րական միջոցներով:

Զմիւռնիոյ, 31 Դեկտ. 1881

... խորագիր Արշալոյս Արարատեանի

... խորագիր տէր:

Ինչպէս արդէն Կ. Պոլսոյ Ազգային թերթերը պա-  
տմապէս ծանուցին: Հայոց Միացեալ ընկերութեանց  
նպատակով զիտմամբ քաղաքիս մէջ Օժանդակ—Մատ-  
նահիւր մը կողմուած է հետեւեալ անձերէ, և վաւերա-  
ցած Միացեալ ընկերութեանց Տնօրէն ժողովն:

Պ. Գառնիկ Գ. Բերքեան տատնապետ  
Պ. Յակոբ Միսիկեան տատնապետ  
Պ. Կարապետ Գ. Բերքեան գանձապետ  
Պ. Մուշէշ Գ. Բերքեան  
Պ. Նշան Սուրբանեան  
Պ. Սարգիս Պարտիկեան

Աւելորդ է երկարօրէն յայտնալ այն պարտաւորու-  
թիւն, զոր փոքր ի շատ քաղաքակիրթ և ազգային  
շահույ համակիր ծառայուած հասարակութիւն մը ունի  
դէպի ամեն այն հաստատութիւնները որ ազգ. դաս-  
տիարակութիւնը ընդհանրացնելու գեղեցիկ և վսեմ  
նպատակն ունին:

Սոյն ազգագուտ հիմնարկութիւններն մին է Միաց-  
եալ ընկերութիւնը, որ իւր հաստատութեան օրէն ի  
վերջ Հայաստանի մէջ կրթութիւն և դաստիարակու-  
թիւն ծառայելու կը նկատուի:

Ուստի քաջալոյս ենք... խորագիր տէր, որ  
քաղաքի պատուարժան հասարակութիւնը, նոր տար-  
ւոյն տոթիլ յօժարակամապիտի տայ իր լուսնի, և չպիտի  
զրանայ քաջալեր կանգնել ազգային համակրութեան  
արժանի ընկերութեան մը, անոր դժուարին և ծանր  
պաշտօնին մէջ:

Մատուցանելով մեր ջերմ համակրանայ հաստատին  
Մանթի զիմաց Օժանդակ Մատնահիւրին Զմիւռնիոյ  
տատնապետ

Յ. Միսիկեան Գառնիկ Գ. Բերքեան

## ՏԵՎԵԼԱՅԻ ԼՈՒՐԵՐ

Անգղիական ընդհանուր Հիւպատոս Հազա-  
րապետ Պ. Թրօթթըրը չորեքշաբթի օրն փոխա-  
քարծայեցեալութեան եկաւ յԱզգային Առաջնոր-  
դարան, ուր մեր Գեր. Առաջնորդ Ս. Հօր հետ  
բարեկամական սիրալիր տեսակցութիւն մի ու-  
նեցաւ: Հազարապետ Պ. Թրօթթըր Կ. Պոլսէն  
Զմիւռնիա եկած է յատուկ պաշտօնով քաղա-  
քիս քարաքանդ ընկերութեան վերաբերեալ  
գծաւորին ինքզնոյ մի կարգադրութեան հա-  
մար, և զոր իւր գովանի տաղանդին շնորհիւ  
յաջողած է լուծելու համաձայնութիւն գոհացը-  
նելով երկու կողմանց մէջ: Ինչպէս յայտնի կը  
տեսնուի յիշեալ բարձրատիկան պաշտօնա-  
տարին մեր քաղաքը գաղութաւոր պաշտօն-  
մի գործ դնելու և օգտակար ծառայութիւն մի  
մատուցանելու համար լինելով յոյժ անպասկ  
է Մասիսի ակնարկութիւնն որ մեր վերջին թի-  
ւէն առած հատուածին մէջ իրմէ յառեալ է Պ.  
Թրօթթըրին համար, որ առաւելու իշխման  
խօսքն:

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱՅԻՈՆ. Գրեթէ միևնոյն վիճակի մէջ կը զտ-  
նուի: Եթեմեկին վաճառմունք են 5 կողով  
Պողտաքի ապրանք, չէքին 130 զրուշ: Նոյն-  
պէս 3 կողով Պողտաք թաւէքուլէն ի գին 122  
զրուշ չէքին:

ԲԱԼԱՄՈՒՏ. Մեր հրապարակի Եթեմեկին  
վաճառմունքն են 12,500 կենդինայ բանուած  
և չբանուած ապրանք ի գին 97—61 զրուշ:

ԲԱՄՊԱԿ. Վաճառեցան 400 հակ մեքենաց-  
ուած ի գին 387 զրուշ, և 400 հակ Ստանա 342  
զրուշ:

## ԾԱՆՈԹՅՈՒՆ

Տօրթօր Սերափեան քոյրերը հինգ տարի Ամերի-  
կա Նիւ—Կորքի կանանց բժշկական համալսարանին և  
հիւանդանոցին մէջ անցուցած և մեծաւ պատուով բը-  
ժշկութիւն, վերաբարձութեան և մանկաբարձութեան  
տիրութիւն ընդունած, նաև Նիւ—Կորքի կանանց հիւան-  
դանոցին մէջ առաջին աստիճանի բժշկութեան պաշտո-  
նը վարած ըլլալով, այժմ դարձած են Զմիւռնիոյ և  
պատիւ ունին ծանուցանել Սրբոյ հասարակութեան  
թիւ իրենց բնակութիւնը հաստատած են գեղեցիկ  
կողմը Վէճիկան փողոց թիւ 19, ուր ամեն օր մինչև կէս  
օր պատրաստ կը պատուին իրենց գիտել հիւանդները  
զարմանելու, նաև կը ծանուցանեն Սրբոյ Հասարակու-  
թեան որ ամեն երեքշաբթի և ուրբաթ օրերը մինչև  
կէսօր իրենց գիտել աղքատաց ձրիաբար պիտի նային:

Տէր քաղաքոյս:

Գ. — Գ. Պ. — Գ. Պ. — Գ. Պ.

Ի ՏԳԱՐԱՆԻ ԱՐԵՎԷԼԱՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ